ԿԱ ՄԻ ԶՐՈՒՅՑ, ԹԵ...

ՍՏԵՓԱՆ ԿՈՒՐՏԻԿՅԱՆ
(1908–1986)

Հայ գրող, արձակագիր, գրաքննադատ, հրապարակագիր, լրագրող, 1926–1928 թթ.՝ Հունաստանի կոմկուսի անդամ: Ավարտել է ծննդավայրի Գևորգյան վարժարանը: 1923–1924 թթ. սովորել է Սալոնիկի (Հունաստան) ամերիկյան «Անաթոլիա» քոլեջում: 1926–1927 թթ. Սալոնիկում խմբագրել է «Աշխատանք» թերթը: 1927 թ. վերջերին Հունաստանից եկել է Հայաստան՝ սովորելու: Ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական և օտար լեզուների ինստիտուտները: 1930–1932 թթ. խմբագրել է «Ավանգարդ» թերթը: Հայրենական մեծ պատերազմի տարիներին եղել է Ղրիմի և Անդրկովկասի զինվորական թերթերի, նաև «Հայաստան» օրաթերթի ռազմաճակատային թղթակիցը: 1962 թ. եղել է «Սովետական գրականություն» ամսագրի գլխավոր խմբագիրը: Հրատարակել է «Լեռնաշխարհի դուստրը» (1947), «Հետախույզներ» (1950), «Հայրենի լեգենդներ» (1957), «Երևան» (1960) և այլ գրքեր: